ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ ՉՈՐԱԹԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՉՈՐԱԹԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ 19 – Ա
« 17 » ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թ.

ՉՈՐԱԹԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ և ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՉՈՐԱԹԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 20 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ N-15Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Ընտանեկան օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ մասով և ՀՀ կառավարության 02.06.2016թվականի N-631-Ն որոշմամբ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Չորաթան համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը, համաձայն հավելվածի:
2. Հաստատել Չորաթան համայնքի հանձնաժողովի կազմը ներքոհիշյալ անդամներով.
-Բաղմանյան Վարուժան- հանձնաժողովի նախագահ, Համայնքի ղեկավար
-Էլմիրա Քալանթարյան – հանձնաժողովի քարտուղար, Աշխատակազմի քարտուղար
-Ուդումյան Ժաննա- հանձնաժողովի անդամ, Ոստիկանության Տավուշի բաժնի պետի ԱՆՁ. գործերի տեղակալ
-Ուդումյան Արմենուհի- հանձնաժողովի անդամ, Բուժամբուլատորիայի վարիչ
-Զարգարյան Վարուժան-հանձնաժողովի անդամ, Համայնքի ավագանու անդամ
3. Ուժը կորցրած ճանաչել Չորաթան համայնքի ավագանու 20 նոյեմբերի 2012 թվականի N15-Ա որոշումն:

Համայնքի ավագանու անդամներ

1. Մ. Զարգարյան / կողմ/
2. Ա. Ուդումյան / կողմ /
3. Վ. Զարգարյան / կողմ/

Կողմ- 3, դեմ – 0, ձեռնպահ-0

Չորաթան համայնքի ղեկավար Վ. Բաղմանյան

քարտուղար Է. Քալանթարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ ՉՈՐԱԹԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՉՈՐԱԹԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ 20 - Ն

,,17 ,, ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016Թ.

ՉՈՐԱԹԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017Թ. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ, ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 7, 8, 9, 10 և 11-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով

ՉՈՐԱԹԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել Չորաթան համայնքի 2017թ-ի

1.1 Տեղական տուրքերի դրույքաչափերը /հավելված 1/

1.2 Տեղական վճարների դրույքաչափերը /հավելված 2/

Կողմ- 3, դեմ – 0, ձեռնպահ-0

Համայնքի ավագանու

անդամներ Մ. Զարգարյան
Վ. Զարգարյան
Ա. Ուդումյան

Չորաթան համայնքի ղեկավար Վ. Բաղմանյան

քարտուղար Է. Քալանթարյան

Հավելված 1
ՉՈՐԱԹԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

,, 17,, ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016Թ.

ԹԻՎ 20 –Ն ՈՐՈՇՄԱՆ

ՉՈՐԱԹԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ 2017Թ. ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ /ՀՀ ԴՐԱՄ/
1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների /ներառյալ՝ ոչ հիմնական / շինարարության /տեղադրման/ թույլատվության համար տեղական տուրքը սահմանվում է՝	
Հիմնական օբյեկտների համար՝	
ա/ մինչև 300քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝	4500_
բ/ սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝	
բա/ 201-ից մինչև 500քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝	9000_
բբ/ 501-ից մինչև 1000քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝	15000_
բգ/ 1001 –ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝	15000_
բդ/ 3001-ից ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար	20000-
Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝	
գ/ Մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝	900_
դ/ 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝	1500_
2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման , արդիականացման աշխատանքների /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլատվություն չպահանջող դեպքերի/ համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝	
ա/ չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների , շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝	900_

1	2	3

բ/ բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման,վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացումկամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն,ապա բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահման-ված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

գ/ նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների,շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա , սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն,որի նկատմամբ կիրառվում է նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլատվության համար տեղական տուրքը սահմանվում է 1500_

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

«1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 1000_

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 1500_

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2000_

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5000_

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10500_

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 30000_

«2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և

ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 1500_

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2000_

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2500_

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5500_

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10000_

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 15000_

5. Համայնքի տարածքում՝

ա/ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլատվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա՝ 1քառակուսի մետրի համար 100-

դ/ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և /կամ/ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլատվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 50000_

ե/ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի խանութներում, կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկում և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլատվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 10000-

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու համար, տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 500_

10.Համայնքի տարածքում մարդատար տաքսու / բացառությամբ երթուղային տաքսիների / ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 3000_

ԶՈՐԱԹԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԲԱՂՄԱՆՅԱՆ

Հավելված 2

ՉՈՐԱԹԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

„17„ ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016Թ.

ԹԻՎ 20 –Ն ՈՐՈՇՄԱՆ

ՉՈՐԱԹԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ 2017Թ. ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

	Դրույքաչափը /ՀՀ դրամ/
1. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար	1000_

ՉՈՐԱԹԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԲԱՂՄԱՆՅԱՆ